«ՎԱՆԱՁՈՐԻ ՄԱՆԿԱՏՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ, ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ, ԱՄՐԱՑՎԱԾ ՈՒ ԱԶԱՏՎԱԾ ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ԲՆԱՒՐԱՅԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2018 թվականի ----- ---------- N ----- -Ն

«ՎԱՆԱՁՈՐԻ ՄԱՆԿԱՏՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ՎԵՐԱՆՎԱՆԵԼՈՒ, ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ, ԱՄՐԱՑՎԱԾ ՈՒ ԱԶԱՏՎԱԾ ԳՈՒՅՔԸ ՈՐՊԵՍ ԲՆԱՒՐԱՅԻՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի և 13-րդ հոդվածի 2-րդ կետի «բ» ենթակետի, Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիական օրենսգրքի» 685-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 7-ին մասի, ինչպես նաև հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) ենթակայության «Վանաձորի մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերանվանել «Վանաձորի երեխաների զարգացման և ընտանիքի աջակցության ցերեկային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպություն:
2. Սահմանել, որ՝

1) «Վանաձորի երեխաների զարգացման և ընտանիքի աջակցության ցերեկային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) զարգացման ծառայություններ և սոցիալական սպասարկում իրականացնող կազմակերպություն է, որի՝

ա. հիմնական նպատակը կազմակերպության սպասարկման տարածքում երեխաների, ինչպես նաև երեխաներ ունեցող ընտանիքների՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու կանխարգելումը և (կամ) կյանքի դժվարին իրավիճակից դուրսբերումը, ինչպես նաև երեխաների մասնագիտական կողմնորոշմանը նպաստումն է, այդ թվում՝ թե՛ կազմակերպությունում

ցերեկային ժամերին՝ կազմակերպության ներքին իրավական ակտերով սահմանված ժամանակահատվածում, և թե՛ կազմակերպությունից դուրս՝ արտակենտրոն ծառայությունների միջոցով, ինչպես նաև կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ հաշմանդամություն ունեցող 3-18 տարեկան երեխաներին խնամքի տրամադրումը, կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 3-18 տարեկան երեխաների՝ ընտանիքում ապրելու և դաստիարակվելու իրավունքի իրականացմանը նպաստելը, ընտանեկան բռնության ենթարկված անձանց և նրանց ընտանիքի անդամներին աջակցությունը.

բ. գործունեության առարկան կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու կանխարգելման և (կամ) կյանքի դժվարին իրավիճակից դուրս բերելու նպատակով սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական և սոցիալ-իրավական բնույթի զարգացման և սոցիալական ծառայությունների կազմակերպումը և (կամ) տրամադրումն է, կազմակերպությունում խնամք ստացողներին օրական մեկ անգամ սննդի, իրավական խորհրդատվության, ուսումնադաստիարակչական ծառայությունների, արվեստի միջոցով թերապիայի, օկուպացիոն թերապիայի (շտկիչ վարժանքներով թերապիա) տրամադրումն է, աշխատանքային թերապիայի և մասնագիտական կողմնորոշման (14 տարեկանից բարձր երեխաների համար), առաջնային բժշկական օգնության և սպասարկման տրամադրման, ժամանցի, մշակութային, ինչպես նաև սոցիալական ներառմանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ միջոցառումների կազմակերպումը, այդ թվում՝ արտակենտրոն ծառայությունների միջոցով, կազմակերպության սպասարկման տարածքում հաշմանդամություն ունեցող երեխաներին և նրանց ընտանիքներին, ինչպես նաև ընտանեկան բռնության ենթարկված անձանց և նրանց ընտանիքի անդամներին աջակցությունը.

2) կազմակերպության՝ որպես զարգացման և սոցիալական սպասարկում իրականացնող կազմակերպության կողմից երեխաների ընդունելության, խնամքի և այլ սոցիալական ծառայությունների տրամադրման հետ կապված հարաբերությունների վրա տարածվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն որոշմամբ սահմանված (N 1 հավելված)՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների ենթակայության կամ սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի հետ համապատասխան պայմանագիր կնքած սոցիալական հոգածության ցերեկային կենտրոն երեխաների ընդունելության, խնամքի և այլ սոցիալական ծառայությունների տրամադրման մասին դրույթները.

3) մինչև կազմակերպության պետական գրանցումը՝ «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում համապատասխան փոփոխությունների կատարումը՝ «Վանաձորի մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված հատկացումները տրամադրվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից հաստատված բյուջետային ծախսերի նախահաշիվների հիման վրա.

4) «Վանաձորի մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպության վերանվանման արդյունքում գոյացած դրամական միջոցներից հատկացնել միջոցներ սույն որոշման 5--րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված Փոքր տների ընդլայնման համար՝ հաստատությունում խնամվող երեխաների կենսաբանական ընտանիք վերադարձնելու կամ երեխային խնամատար ընտանիքում տեղավորելու անհնարինության դեպքում:

3. Կազմակերպությունն իրականացնում է ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) վճարովի հիմունքներով տրամադրում է հետևյալ ծառայությունները.

ա. ուսուցում երգի, պարի, նկարչության, կարուձևի և այլ խմբակներում.

բ. ուսուցում ավտոգործի, արհեստագործության, ասեղնագործության, փայտամշակման և ծեփագործության խմբակներում.

գ. համակարգչային և օտար լեզվի դասընթացների կազմակերպում:

4. Կազմակերպության կառավարման, ինչպես նաև «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի «գ», «դ», «ե» և «է» ենթակետերով նախատեսված լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը:
5. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարին՝

1) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկամսյա ժամկետում հաստատել կազմակերպության կանոնադրությունը՝ նոր խմբագրությամբ և ապահովել այն սահմանված կարգով իրավաբանական անձանց պետական գրանցում իրականացնող մարմին ներկայացնելը.

2) մինչև «Վանաձորի մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպության վերանվանման հետ կապված գործընթացների ավարտը, սույն ենթակետում նշված կազմակերպությունում խնամվող երեխաների գնահատված կարիքներին համապատասխան, ապահովել նրանց՝ կենսաբանական կամ խնամակալի (հոգաբարձուի) ընտանիք վերադարձը, խնամատար ընտանիքում խնամքի կազմակերպումը, «Փոքր տուն» տեղավորելը.

3) 6 ամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզում խնամատար ընտանիքների թվի ավելացման, շուրջօրյա խնամք տրամադրող՝ բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններից կենսաբանական կամ խնամակալի (հոգաբարձուի) ընտանիք վերադարձած երեխաների ընտանիքներին տրամադրվող նյութական աջակցության, ինչպես նաև բնակչության սոցիալական պաշտպանության հաստատություններ երեխաների մուտքի կանխարգելման վերաբերյալ համապատասխան ծրագրեր:

6. Կազմակերպության կանոնադրության փոփոխության հետ կապված պետական գրանցման ծախսերը կատարել «Հայաստանի Հանրապետության 2018 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով «Վանաձորի մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպության համար նախատեսված միջոցների հաշվին:
7. «Վանաձորի մանկատուն» պետական ոչ առևտրային կազմակերպությանն ամրացված և վերանվանման արդյունքում կազմակերպության գործառույթների իրականացման համար ոչ անհրաժեշտ շարժական գույքը հետ վերցնել և ամրացնել «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին՝ համաձայն N 1 հավելվածի:
8. Թույլատրել՝

1) ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությանը, սույն որոշման N 1 հավելվածում ներառված գույքից որպես բնաիրային օգնություն տրամադրել՝ նախարարության ենթակայության Վանաձորի մանկատուն հաստատություն հանդիսացող պետական ոչ առևտրային կազմակերպության վերանվանման արդյունքում կենսաբանական ընտանիք տեղափոխված երեխաների ընտանիքներին համաձայն N 2 հավելվածի.

9. Սահմանել, որ սույն որոշման N 2 հավելվածում ներառված գույքը սույն որոշման 8-րդ կետով սահմանված ընտանիքներին տրամադրվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի հունիսի 28-ի N 736-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելված համաձայն:
10. 10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հավելված N 1

ՀՀ կառավարության _____ թվականի

_____ի N ____ Ն որոշման

Ց Ա Ն Կ

«ՎԱՆԱՁՈՐԻ ՄԱՆԿԱՏՈՒՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՄՐԱՑՎԱԾ ԵՎ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՈՉ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՇԱՐԺԱԿԱՆ ԳՈՒՅՔԸ ՀԵՏ ՎԵՐՑՎՈՂ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ԱՄՐԱՑՎՈՂ ԳՈՒՅՔԻ

Հ/հ	Գույքի անվանումը և մակնիշը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը (դրամ)	Սկզբնական արժեք (դրամ)	Մ ն յի (դ

1	2	3	4	5	6	7
	ԳՈՒՅՔ - ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄ					
1	Հեռուստացույց ‘VESTEL ’ 32LCD TV	հատ	1	35,000	35,000	10
2	Հեռուստացույց‘LG’	հատ	1	120,000	120,000	48
3	Հեռուստացույց "Եվրոմաքս"	հատ	1	60,000	60,000	38
4	Էլ.ջեռակ յուղով	հատ	2	38,400	76,800	67
5	Ալյումինե աստիճան	հատ	1	30,000	30,000	2,
6	Գրատախտակ	հատ	1	29,000	29,000	5,
7	Գազի ճնշման ռեգուլյատոր	հատ	1	15,000	15,000	1,
8	Գազօջախ		1	310,000	310,000	19
9	Գազի ջրատաքացուցիչ	հատ	1	65,000	65,000	41
10	Լվացքի մեքենա ‘ARISTON’ TCD9756H	հատ	1	100,000	100,000	31
11	Չորացնող մեքենա Gorenje D71312	հատ	1	40,000	40,000	12
12	Լվացքի մեքենա LGF 1441	հատ	2	490,000	980,000	84
13	Լվացք չորացնող մեքենա ARISTON /Սոնա Սուքիասյան/	հատ	1	100,000	100,000	55
14	Արդուկ BOSH 3630	հատ	1	60,000	60,000	49
15	Մանկական քայլասայլակ	հատ	2	40,700	81,400	32
16	Հեռաալեհավաք դրսի	հատ	1	34,170	34,170	0
	Ընդամենը				2,136,370	1,
	ԿԱՀՈՒՅՔ					
1	Նորածինի մահճակալ	հատ	2	5,000	10,000	1,
2	Մահճակալ մանկական	հատ	1	8,000	8,000	1,
3	Մահճակալ 1 հարկով	հատ	5	15,000	75,000	0
4	Զգեստապահարան	հատ	2	5,000	10,000	4,
5	Գրապահարան	հատ	1	5,000	5,000	2,
6	Պահարան	հատ	8	136,125	1,089,000	0
7	Պահարան լամինատե	հատ	2	67,500	135,000	0
8	Հագուստի պահարան	հատ	1	9,075	9,075	0
9	Աթոռ	հատ	32	6,141	196,512	0
10	Մատրաս	հատ	44	25,000	1,100,000	66
11	Փափուկ կահույք (3 կտորից)	հատ	2	20,000	40,000	18
12	Գրասեղան 1 տումբով	հատ	5	31,780	158,900	0
13	Մահճակալ 2 հարկով	հատ	3	108,500	325,500	0
14	Մահճակալ 1 հարկով	հատ	8	7,000	56,000	23
15	Մահճակալ 2 հարկով	հատ	1	35,000	35,000	0
16	Մահճակալ 2 հարկով	հատ	7	25,000	175,000	0
17	Մահճակալ 1 հարկով	հատ	5	15,000	75,000	0
18	Աթոռ	հատ	30	6,141	184,230	0
19	Մատրաս	հատ	15	25,000	375,000	22

20	Մատրաս	հատ	12	25,000	300,000	24
21	Մատրաս	հատ	8	25,000	200,000	19
	Ընդամենը				**4,562,217**	**1,**

ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՒՅՔ (կենցաղային ապրանքներ)

1	Մանեժ մանկական	հատ	2	30,000	60,000	6
2	Մանկ. սայլակ	հատ	2	10,000	20,000	6
3	Մանկական երաժշ.սեղան	հատ	1	20,350	20,350	8
	Ընդամենը՝		**5**		**100,350**	**8**

Հավելված N 2

ՀՀ կառավարության _____ թվականի

_____ի N ____ Ն որոշման

Ց Ա Ն Կ

«Հայաստանի Հանրապետության աշխատանքի ԵՎ սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին ամրացված գույքից՝ որպես բնաիրային օգնություն նախարարության ենթակայության Վանաձորի մանկատան վերակազմակերպման արդյունքում կենսաբանական ընտանիք տեղափոխված երեխաների ընտանիքներին տրամադրվող գույքի

Հ/հ	Գույքի անվանումը և մակնիշը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը (դրամ)	Սկզբնական արժեք (դրամ)	Մ ն յի (դ
1	2	3	4	5	6	7
	ԳՈՒՅՔ - ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄ					
1	Հեռուստացույց ‘VESTEL ’ 32LCD TV	հատ	1	35,000	35,000	10
2	Հեռուստացույց‘LG’	հատ	1	120,000	120,000	48
3	Հեռուստացույց "Եվրոմաքս"	հատ	1	60,000	60,000	38
4	Էլ.ջեռակ յուղով	հատ	2	38,400	76,800	67
5	Ալյումինե աստիճան	հատ	1	30,000	30,000	2,
6	Գրատախտակ	հատ	1	29,000	29,000	5,
7	Գազի ճնշման ռեգուլյատոր	հատ	1	15,000	15,000	1,
8	Գազօջախ		1	310,000	310,000	19
9	Գազի ջրատաքացուցիչ	հատ	1	65,000	65,000	41
10	Լվացքի մեքենա	հատ	1	100,000	100,000	31

	‘ARISTON’ TCD9756H					
11	Չորացնող մեքենա Gorenje D71312	հատ	1	40,000	40,000	12
12	Լվացքի մեքենա LGF 1441	հատ	2	490,000	980,000	84
13	Լվացք չորացնող մեքենա ARISTON /Սոնա Սուքիասյան/	հատ	1	100,000	100,000	55
14	Արդուկ BOSH 3630	հատ	1	60,000	60,000	49
15	Մանկական քայլասայլակ	հատ	2	40,700	81,400	32
16	Հեռաալեհավաք դրսի	հատ	1	34,170	34,170	0
	Ընդամենը				2,136,370	1,

	ԿԱՀՈՒՅՔ				
1	Նորածինի մահճակալ	հատ	2	5,000	10,000
2	Մահճակալ մանկական	հատ	1	8,000	8,000
3	Մահճակալ 1 հարկով	հատ	5	15,000	75,000
4	Զգեստապահարան	հատ	2	5,000	10,000
5	Գրապահարան	հատ	1	5,000	5,000
6	Պահարան	հատ	8	136,125	1,089,000
7	Պահարան լամինատե	հատ	2	67,500	135,000
8	Հագուստի պահարան	հատ	1	9,075	9,075
9	Աթոռ	հատ	32	6,141	196,512
10	Մատրաս	հատ	44	25,000	1,100,000
11	Փափուկ կահույք (3 կտորից)	հատ	2	20,000	40,000
12	Գրասեղան 1 տումբով	հատ	5	31,780	158,900
13	Մահճակալ 2 հարկով	հատ	3	108,500	325,500
14	Մահճակալ 1 հարկով	հատ	8	7,000	56,000
15	Մահճակալ 2 հարկով	հատ	1	35,000	35,000
16	Մահճակալ 2 հարկով	հատ	7	25,000	175,000
17	Մահճակալ 1 հարկով	հատ	5	15,000	75,000
18	Աթոռ	հատ	30	6,141	184,230
19	Մատրաս	հատ	15	25,000	375,000
20	Մատրաս	հատ	12	25,000	300,000
21	Մատրաս	հատ	8	25,000	200,000
	Ընդամենը				**4,562,217**

	ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՒՅՔ (կենցաղային ապրանքներ)				
1	Մանեժ մանկական	հատ	2	30,000	60,000
2	Մանկ. սայլակ	հատ	2	10,000	20,000
3	Մանկական երաժշ.սեղան	հատ	1	20,350	20,350
	Ընդամենը՝		**5**		**100,350**